# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

ՀՀ Արագածոտնի մարզ,ք. Ապարան

Երկու հազար տասներեք թվականի ապրիլի չորսին

ՀՀ Արագածոտն մարզի, Ապարանի քաղաքապետարանը ի դեմս լիազորված անձ քաղ. Լևոն Հովհաննեսի Սարգսյանի, անձնագիր՝AK 0692042 , տրված՝26. 01. 2011թ.023-ի կողմից, հաշվառված է ք.Ապարան, Գայի փողոց, տուն 45 հասցեում, այսուհետ «ԿՈՂՄ - 1 » և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի ՏՀՏ-ն ի դեմս լիազորված անձ Ապարանի տարածքային բաժնի պետ քաղ. Արիստակես Նորայրի Մելքոնյանի , անձնագիր՝AH 0545738 , տրված՝07. 03. 2008թ. 023-ի կողմից, հաշվառված է ք.Ապարան, Բաղրամյան փողոց, շենք 47, բն. 9 հասցեում, այսուհետ « ԿՈՂՄ - 2» , կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Կողմերը որոշեցին «Ապարան» նոտարական տարածքի նոտարի կողմից 28.09. 2012թ. հաստատված և սեղանամատյանի թիվ 725 համարով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի թիվ 3 ենթագլխի 3.1 կետում կատարել հետևյալ փոփոխությունը. այդ կետում ներառված 34350 / երեսունչորս հազար երեք հարյուր հիսուն / ՀՀ դրամ ամսական վարձավճարը հանել և գրել ամսական 57250 / հիսունյոթ հազար երկու հարյուր հիսուն / ՀՀ դրամ և տարեկան 171750 / մեկ հարյուր յոթանասունմեկ հազար յոթ հարյուր հիսուն / ՀՀ դրամ վարձավճարը հանել ու գրել 687000 / վեց հարյուր ութսունյոթ հազար / ՀՀ դրամ տարեկան վարձավճար :

2. Պայմանագրի թիվ 5 ենթագլխի 5.1 կետում կատարվի հետրյալ փոփոխությունը. այդ կետում ներառված ժամկետը մինչև 31.12. 2012թ. հանել և գրել անորոշ ժամկետով : Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ :

3.Սույն համաձայնագիրը համարվում է 28. 09. 2012թ. ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը :

4.Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով , 4 /չորս/ օրինակից,որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկ օրինակը պահվում է Ապարանի նոտարական գրասենյակի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՈՂՄԵՐ՝ 1. ________________________________

2. ________________________________

Երկու հազար տասներեք թվականի ապրիլի չորսին
Ես՝ «ԱՊԱՐԱՆ» նոտարական տարածքի նոտար Սիրեկան Ռաֆիկի Հովհաննիսյանս վավերացնում եմ լիազորված անձեր քաղ. Լևոն Հովհաննեսի Սարգսյանի և Արիստակես Նորայրի Մելքոնյանի ստորագրությունների իսկությունը, որը կատարվել է իմ ներկայությամբ:
ՀՀ «Նոտարիատի մասին » օրենքի 67 հոդվածի համաձայն հաստատում եմ որոշակի անձանց կողմից կատարված ստորագրության իսկությունը, այլ ոչ թե դրանում շարադրված փաստերը : Փաստաթուղթը ստորագրողների ինքնությունը ստուգված է :

Գրանցված է սեղանամատյանում ......216......
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին » օրենքների :

ՆՈՏԱՐ ---------------------------Ս.Ռ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արագածոտնի մարզ,ք. Ապարան

երկու հազար տասնչորս թվականի մարտի քսանհինգին

ՀՀ Արագածոտն մարզի, Ապարանի քաղաքապետարանը ի դեմս լիազորված անձ քաղ. Լևոն Հովհաննեսի Սարգսյանի, անձնագիր՝ AK 0692042 , տրված՝26. 01. 2011թ.023-ի կողմից, հաշվառված է ք.Ապարան, Գայի փողոց, տուն 45 հասցեում,

այսուհետ «ԿՈՂՄ - 1 » և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի ՏՀՏ-ն ի դեմս լիազորված անձ Ապարանի տարածքային բաժնի պետ քաղ. Արիստակես Նորայրի Մելքոնյանի , անձնագիր՝AH 0545738 , տրված՝07. 03. 2008թ. 023-ի կողմից, հաշվառված է ք.Ապարան,Բաղրամյան փողոց, շենք 47, բն. 9 հասցեում, այսուհետ « ԿՈՂՄ - 2» , կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Կողմերը որոշեցին «Ապարան» նոտարական տարածքի նոտարի կողմից 28.09. 2012թ. հաստատված և սեղանամատյանի թիվ 725 համարով գրանցված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի թիվ 3 ենթագլխի 3.1 կետում կատարել հետևյալ փոփոխությունը. այդ կետում ներառված 57250/ հիսունյոթ հազար երկու հարյուր հիսուն / ՀՀ դրամ ամսական վարձավճարը հանել և գրել ամսական 30755/ երեսուն հազար յոթ հարյուր հիսունհինգ / ՀՀ դրամ , 2014թվականի հունվարի մեկից մինչը մարտի երեսունմեկը վճարման ենթակա գումարն է 156355 / մեկ հարյուր հիսունվեց հազար երեք հարյուր հիսունհինգ / ՀՀ դրամ , իսկ 2014 թվականի ապրիլի մեկից մինչև տարվա վերջը վճարման ենթակա է 276795 / երկու հարյուր յոթանասունվեց հազար յոթհարյուր իննսունհինգ / ՀՀ դրամ ,հետագա տարիների համար տարեկան վարձավճարը սահմանվում է 369060/ երեք հարյուր վաթսունինը հազար վաթսուն/ ՀՀ դրամ :

2.Պայմանագրի թիվ 1 ենթագլխի 1.2 կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝ այդ կետում ներառված 114,5 /մեկ հարյուր տասնչորս ամբողջ հինգ/ ք.մ. մակերեսը հանել և գրել 61.51/վաթսունմեկ ամբողջ հիսունմեկ/ ք.մ. մակերես :

Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ :

3.Սույն համաձայնագիրը համարվում է 28. 09. 2012թ. ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը :

4.Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով , 4 /չորս/ օրինակից,որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որից մեկ օրինակը պահվում է Ապարանի նոտարական գրասենյակի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՈՂՄԵՐ՝ 1 [illegible] Լևոն Հովհաննեսի Սարգսյան

2. [illegible] Արիստակես Նորայրի Մելքոնյան

Երկու հազար տասներեք թվականի մարտի քսանհինգին
Ես՝ «ԱՊԱՐԱՆ» նոտարական տարածքի նոտար Սիրեկան Ռաֆիկի Հովհաննիսյանս վավերացնում եմ լիազորված անձեր քաղ. Լևոն Հովհաննեսի Սարգսյանի և Արիստ Նորայրի Մելքոնյանի ստորագրությունների իսկությունը, որը կատարվել է իմ ներկայությամբ:
ՀՀ «Նոտարիատի մասին » օրենքի 67 հոդվածի համաձայն հաստատում եմ որոշակ անձանց կողմից կատարված ստորագրության իսկությունը, այլ ոչ թե դրանում շարա փաստերը : Փաստաթուղթը ստորագրողների ինքնությունը ստուգված է :

Գրանցված է սեղանամատյանում 204
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին » օրենքների :

ՆՈՏԱՐ ---------- Ս.Ռ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ